ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

գիտական խորհրդի 09.02.2021թ. նիստի

Գիտական խորհրդի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 40 (քառասուն) անդամից՝ 35-ը (երեսունհինգ),

1.	Սերոբյան Երվանդ	Գիտական խորհրդի նախագահ, ռեկտորի ԺՊ
2.	Ավետիսյան Նազելի	Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
3.	Նիկողոսյան Գագիկ	ՇՊՀ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
4.	Մելքոնյան Հովիկ	Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
5.	Սարգսյան Արմենուհի	Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոնի տնօրեն
6.	Խաչատրյան Թերեզա	Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և SS կենտրոնի տնօրեն
7.	Պետրոսյան Կարինե	Գիտական քարտուղար (գիտական խորհրդի քարտուղար)
8.	Պողոսյան Բագրատ	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
9.	Մելիքյան Թամարա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան
10.	Հովհաննիսյան Օֆելյա	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
11.	Մարդոյան Ռուզաննա	Մանկավարժության ֆակուլտետի դեկան
12.	Մկրտչյան Արթուր	Ռազմական ամբիոնի պետ
13.	Դավինյան Աշոտ	ՇՊՀ քոլեջի տնօրեն

14.	Դարբինյան Կարեն	ՇՊՀ ավագ դպրոցի տնօրեն
15.	Խաչատրյան Վալերի	ՇՊՀ արհմիության նախագահ
16.	Սողոյան Սպարտակ	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենաերիտասարդ դոկտոր)
17.	Մկոյան Արտաշես	Մ.գ.դ, պրոֆեսոր, (անենատարեց դոկտոր)
18.	Սարգսյան Սամվել	ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր, մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնի պրոֆեսոր
19.	Մարտիրոսան Լևոն	Աշխարհագրության, կենսաբանության և քիմիայի ամբիոնի վարիչ, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ
20.	Մկրտչյան Արթուր	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի գործարարության և վարչարարության ամբիոնի վարիչի ԺՊ, տնտ.գ.թ., դոցենտ
21.	Ղուկասյան Լուսիկ	Մանկավարժության ֆակուլտետի մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ., դոցենտ
22.	Աղանյան Գևորգ	Մանկավարժության ֆակուլտետի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչի ԺՊ, մ.գ.թ. դոցենտ
23.	Հովհաննիսյան Արտակ	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնի վարիչի ԺՊ, պ.գ.թ., դոցենտ
24.	Սահակյան Կարինե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի հոգեբանության ամբիոնի վարիչի ԺՊ, հոգ.գ.թ., դոցենտ
25.	Կուրազյան Օֆելյա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի արվեստի ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
26.	Տեր-Ադամյան Շուշան	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., ասիստենտ
27.	Մաթևոսյան Էվելինա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչի ԺՊ, բ.գ.թ., դոցենտ
28.	Համբարյան Ժենյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի

29.	Հովհաննիսյան Յուլյանա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության 3-րդ կուրսի ուսանողուհի
30.	Գալստյան Ամալյա	Բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի մաթեմատիկա մասնագիտության մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի
31.	Վիրաբյան Ալլա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
32.	Մուրազյան Վարդուհի	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
33.	Աթոյան Շուշաննա	Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
34.	Հովհաննիսյան Հռիփսիմե	Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի սոցիոլոգիա մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի
35.	Սարգսյան Սվետլանա	Ռազմական ամբիոնի նախնական զինվորական պատրաստություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի

ՕՐԱԿԱՐԳ

1. ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության» ամբիոնի վարիչի ԺՊ, բանասիրական գիտությունների թեկնածու Շուշանիկ Վոլոդյայի Տեր-Ադամյանին «Գերմանական լեզուներ» /Ժ0207/ մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

   Հաղ.՝՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

2. ՇՊՀ-ի «Բնագիտամաթեմատիկական» ֆակուլտետի «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների» ամբիոնի ասիստենտ Գայանե Սոկրատի Հայրապետյանին «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա» /Ա0204/ մասնագիտությամբ » դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

   Հաղ.՝՝ գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն Ա. Սարգսյան

3. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Ա. Սարգսյանի ղեկավարությամբ ներկայացված «Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով 2021 թվականի գիտական թեմաների մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

4. Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Վ. Մանուկյանի ղեկավարությամբ ներկայացված «Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով 2021 թվականի գիտական թեմաների մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

5. Գործարարության և վարչարարության ամբիոնի դասախոս, տնտ. գիտ. թեկն. Հ. Խաչատրյանի հեղինակությամբ ներկայացված «Տնտեսագիտություն (Մեթոդական ցուցումներ ոչ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար)» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/
6. Ընթացիկ հարցեր

6.1 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Ս. Սողոյանի ղեկավարությամբ ներկայացված «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2021 թվականի մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ս. Սողոյան/

6.2 Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի պատվավոր վարիչ ֆիզմաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ ներկայացված «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի պահպանում և զարգացում» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ս. Սարգսյան/

Գիտական խորհրդի նախագահ Ե. Սերոբյանը բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին:
Պարոն Սերոբյանը նշեց, որ գիտական խորհրդի օրակարգային հարցերին և դրանց առնչվող փաստաթղթերին գիտական խորհրդի անդամները ծանոթ են, քանի որ էլեկտրոնային նամակով հասանելի են եղել բոլորին և և քվեարկության դրեց նիստի օրակարգը

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Օրակարգը հաստատվեց:

1. ԼՍԵՑԻՆ՝

1. ՇՊՀ-ի «Հումանիտար գիտությունների և արվեստի» ֆակուլտետի «Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության» ամբիոնի վարիչի ԺՊ, բանասիրական գիտությունների թեկնածու Շուշանիկ Վոլոդյայի Տեր- Ադամյանին «Գերմանական լեզուներ» /Ժ0207/ մասնագիտությամբ դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին
2. ՇՊՀ-ի «Բնագիտամաթեմատիկական» ֆակուլտետի «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և տեղեկատվական տեխնոլոգիաների» ամբիոնի ասիստենտ Գայանե Սոկրատի Հայրապետյանին «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա» /Ա0204/ մասնագիտությամբ » դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին

Ա. Սարգսյանը ներկայացրեց դոցենտի գիտական կոչում հայցող հավակնորդներին::

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ տիկին Թ. Մելիքյանը, Ն. ԱՎետիսյանը, ովքեր նշեցին, որ Շուշանիկ Տեր-Ադամյանը պարտաճանաչ ու գիտակ աշխատակից է, իր վրա դրված պարտականությունները կատարում է ժամանակին ու պատշաճ, նաև նրա մարդկային որակները խիստ բարձր մակարդակի են և արժանի է դոցենտի կոչմանը արժանանալուն, ուստի առաջարկում են հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:
Ս. Սարգսյանը, Բ. Պողոսյանը, Ռ. Մարդոյանը, ովքեր դրվատանքի խոսքեր հնչեցրին Գայանե Հայրապետյանի մասին և գիտական խորհրդի անդամներին հորդորեցին կողմ քվեարկել, նրան դոցենտր կոչում շնորհելու հարցում:

Պարոն Սերոբյանը առաջարկ ստացավ հարցը դնել փակ գաղտնի քվեարկության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Դոցենտի գիտական կոչման հավակնորդ՝

№	Անուն, հայրանուն, ազգանուն	Ամբիոն, ձևայնացված կարգավիճակ	Գիտության բնագավառ, մասնագիտություն, թվանիշ
1 2.	Շուշանիկ Տեր-Ադանյան Գայանե Հայրապետրան	1.Միջմշակութային հաղորդակցության և զբոսաշրջության 2.Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ	1.Ժ.02.07– «Գերմանական լեզուներ» 2. Ա0204- Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա

Գիտական կոչում շնորհելու մասին որոշում կայացնելու համար անցկացված փակ գաղտնի քվեարկություն կազմակերպելու համար ընտրվեց 3 հոգուց բաղկացած հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ Հովիկ Մելքոնյան (նախագահ), Խաչատրյան Թերեզա և ուսանողներից՝ Ամալյա Գալստյանը: Քվեարկության անցկացումից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Հ. Մելքոնյանը ներկայացրեց հետևյալ արդյունքները.

№	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Շուշանիկ Տեր-Ադանյան	33	1	1
2.	Գայանե Հայրապետյան	32	1	2

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաշվի առնելով, որ Շուշանիկ Վոլոդյայի Տեր-Ադամյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 35-ը. կողմ՝ 33, դեմ՝ 1, անվավեր՝ 1) Շուշանիկ Վոլոդյայի Տեր-Ադամյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ժ.02.07– «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

2. Հաշվի առնելով, որ Գայանե Սոկրատի Հայրապետյանի ներկայացրած գործը լիովին համապատասխանում է ՀՀ կառավարության 09.07.2001թ. հ. 615 որոշմամբ հաստատված ՀՀ-ում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի՝ դոցենտի գիտական կոչման համար սահմանված պահանջներին (5բ), ՇՊՀ գիտական խորհրդի նիստում անցկացված փակ գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա (քվեարկել են 35-ը. կողմ՝ 32, դեմ՝ 1, անվավեր՝ 1) Գայանե Սոկրատի Հայրապետյանին շնորհել դոցենտի գիտական կոչում՝ Ա.02.04– «Դեֆորմացվող պինդ մարմնի մեխանիկա» մասնագիտությամբ և միջնորդել ՀՀ ԲՈԿ՝ հաստատելու այդ որոշումը և ամրագրելու համապատասխան դիպլոմով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

3. ԼՍԵՑԻՆ՝ Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Ա. Սարգսյանի ղեկավարությամբ ներկայացված «Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով 2021 թվականի գիտական թեմաների մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով, որ նանոնյութերը առաջնակարգ դիրք են գրավում ժամանակակից տեխնիկայի բոլոր բնագավառներում և, որ նրանց դեֆորմացիաների ուսումնասիրման մաթեմատիկական մոդելների կառուցումը ներկայումս միջազգային մասշտաբով գիտության կարևորագույն ուղղություններից մեկն է, համարել, որ ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտե ներկայացվող՝ «Նանոնյութերի դեֆորմացիոն մոդելները՝ որպես մոմենտային առաձգականության տեսությամբ ճկուն սալեր և թաղանթներ» թեման՝ միանգամայն օրիգինալ է ու արդիական և երաշխավորել նրա ներկայացումը հայտարարված մրցույթին:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

4. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի դոցենտ, ֆիզմաթ գիտ. թեկն. Վ. Մանուկյանի ղեկավարությամբ ներկայացված «Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով 2021 թվականի գիտական թեմաների մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կազմակերպած Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով 2021 թվականի գիտական թեմաների մրցույթին ՇՊՀ-ի կողմից «Ֆիզիկայի և մաթեմատիկայի միջառարկայական հիմնարար կապերի և առարկայական մեթոդների վեր հանումը որպես ուսուցման արդյունավետության բարձրացման միջոց» թեմայով հայտի ներկայացումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

5. ԼՍԵՑԻՆ՝ Գործարարության և վարչարարության ամբիոնի դասախոս, տնտ. գիտ. թեկն. Հ. Խաչատրյանի հեղինակությամբ ներկայացված «Տնտեսագիտություն (Մեթոդական ցուցումներ ոչ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար)» աշխատանքը տպագրության երաշխավորելու հարցի մասին /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հիմք ընդունելով արտաքին գրախոսման դրական կարծիքները՝ Հ. Խաչատրյանի հեղինակությամբ ներկայացված «Տնտեսագիտություն (Մեթոդական ցուցումներ ոչ տնտեսագիտական մասնագիտությունների ուսանողների համար)» աշխատանքը երաշխավորել տպագրության:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.1. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Ս. Սողոյանի ղեկավարությամբ ներկայացված «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2021 թվականի մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ս. Սողոյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Երաշխավորել ՀՀ ԿԳՄՄՆ գիտության կոմիտեի կազմակերպած Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի 2021 թվականի մրցույթին՝ ՇՊՀ-ի կողմից «Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ինֆորմատիկայի շարունակական կրթության պրոբլեմային գիտամանկավարժական լաբորատորիա» թեմայով հայտի ներկայացումը:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

6.2. ԼՍԵՑԻՆ՝

Մաթեմատիկայի, ֆիզիկայի և ՏՏ» ամբիոնի պատվավոր վարիչ ֆիզմաթ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ ներկայացված «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի պահպանում և զարգացում» վերնագրով հայտը ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտեի Գիտական և գիտատեխնիկական

գործունեության բազային ֆինանսավորման ծրագրի մրցույթին ներկայացնելու երաշխավորության հարցի մասին /Զեկուցող՝ Ս. Սարգսյան/

ՈՐՈՇԵՑԻՆ՝

ՇՊՀ «Նանո- և միկրոտեխնիկայի նյութերի և կառուցվածքների մեխանիկայի պրոբլեմային լաբորատորիայի պահպանում և զարգացում» թեմայով ներկայացված 2022 թվականի գիտական ծրագիրը համարել արդիական և դրական եզրակացությամբ հայտը ներկայացնել ՀՀ ԿԳՄՄՆ Գիտության կոմիտե:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

35 անդամ. կողմ՝ 35, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ե. ՍԵՐՈԲՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ